

եւ իրեն հաճելի վարձակի մը նուիրեց (Մամ. 12): Դարեր կ'անցնին, ու մեր դեռ հայ իշխանը կը գտնենք մի եւ նոյն մակարդակի վրայ: Շնորհալին անոնց զբաւած խրատուց մէջ կը զգացէ՝ թէ ինչպէս իրենց հպատակները կը ծառայեցնէին անգթօրէն « որպէս զանբան կենդանիս », զլանալով անոնց հարկաւոր սնունդն անգամ, եւ կտրելով անոնց օրինաւոր վարձը: Գոհ եղէք, կ'ըսէ, որ « վաստակօք նոցա մեծանայք եւ առաւել քան զչափն փափկանայք »: Կը յարէ՝ թէ ոմանք կը կողոպտէին իսկ անոնց ստացուածքը՝ գործակցութեամբ գողերու, եւ կը սպանէին զրկեալները՝ որպէս զի յափշտակողաց դատախազ չկանգնէին: Եւ այսպէս « ի զրկանաց կամ ի գողութենէ եւ ի յափշտակութենէ լնուն զսեղանս իւրեանց » (Ընդհ. 45-7):

Յայտնի է՝ թէ առաքինութեան հիմը ժուժկալութիւնն է, որ կը կազդուրէ մարմինը, կ'ամրապնդէ հոգին, եւ կը զօրացնէ նկարագիրը: Իսկ մեր աւագանւոյն այդ « լցեալ սեղանք » կամ հանապազօրեայ որկորստութիւնը եւ արբեցութիւնը անշուշտ առ այս չէին սահմանուած, եւ լոկ հարըստահարութեամբ չպիտի վերջանային, այլ խորապէս պիտի խանգարէին մարմինն